Հաստատում եմ
«Ադամյան դպրոցի» տնօրեն՝ Լ. Ադամյան
14.06.2023թ.

«Փոքրիկ նկարիչ»

ՆԿԱՐՉԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Տարրական դպրոց/ 6-10 տարեկան/

Խմբավար՝ Հասմիկ Աբրահամյան

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Փոքրիկ նկարիչ» նկարչական խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից.

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը

Ծրագրում առանձնացված են կերպարվեստի պարապմունքների տարբեր տեսակները՝ դրանց համակարգված ուսուցումով , որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:
Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների,կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

«Փոքրիկ նկարիչ» նկարչական խմբակի սաները ամբողջ տարվա ընթացքում կստանան ակադեմիական գիտելիքներ,կիմտանան գործնական աշխատանքների

մեջ և տեսականորեն կհարստացնեն իրենց շտեմարանը: Ստացված գիտելիքները կկարողանան կիրառել ստեղծագործական աշխատանքներում՝ վառ, պատկերավոր, ճշգրիտ և ամբողջական կերպարներ ստեղծելու համար:

Ծանոթացում կլինի նաև Երևան քաղաքի հուշակոթողներին:Կծանոթանան հայ և արտասահմանյան հայտնի նկարիչների կյանքին և գործունեությանը, կարտանկարեն նրանց ամենահայտնի նկարները: Տարվա ընթացքում կմասնակցեն տարբեր ցուցահանդեսների, կարտահայտեն իրենց կարծիքները, որից ելնելով կկազմակերպվեն խմբային աշխատանքներ: Տարվա վերջում նախատեսվում է կազմակերպել ցուցահանդես, որի ընթացքում կցուցադրվեն ամբողջ տարվա կատարված աշխատանքները:

«Փոքրիկ նկարիչ» նկարչական խմբակի

ԾՐԱԳԻՐ

(շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ)

Բնօրինակից պատկերում(20ժամ)
Նպատակը
Զարգացնել աշակերտների մոտ երանգային և գունային աստիճանավորմամբ ձևով ոչ բարդ առարկաների ծավալի ստացում:
Խնդիրներ
Բնանկարի գծանկարչական պատկերումը 3-4 պլանով, առարկաների հեռանկարային կրճատմամբ:
Վերջնարդյունքներ
Կկարողանան ստեղծել պարզագույն նատյուրմորտ, որոնք դասավորված են ճակատային դիրքով՝ հաշվի առնելով մի առարկայի վարագուրումը մյուսով:
Բովանդակություն
1. Նատյուրմորտ 8 ժամ • Տեղեկություն նատյուրմորտի մասին 1 ժ • Նատյուրմորտի ստեղծում բնօրինակից 2 ժ • Պարզագույն նատյուրմորտ 2 ժ • Դեկորատիվ նատյուրմորտ 1 ժ • Նատյուրմորտ մրգերով 2 ժ 2. Բնանկար 4 ժամ • Ծանոթացում, քննարկում 1 ժ • Բնանկարի պատկերման տարրերը (լուսաստվերի դերը) 1 ժ • Գործնական աշխատանք(ինքնուրույն վերաբերմունքի արտահայտում) 2 ժ 3. Դիմանկար 4 ժամ • Ինքնանկար 2 ժ • Աշխատանք բնօրիանկից (ընկերոջ դիմանկարը) 2 ժ 4. Կենցաղային ժանր 4 ժամ • Տեղեկություն գրաֆիկայի, գեղանկարչության և քանդակագործության մասին 1ժ • Աշխատանք ծեփամածիկով 2 ժ • Կենցաղային առարկաների պատկերում 1 ժ

Թեմատիկ նկարչություն(22 ժամ)
Նպատակը
Զարգացնել, ակտիվացնել ստեղծագործական ներուժը, աշխատանքի պլանավորումը, ձևավորել արդյունքների ստացման կարողությունները:
Խնդիրներ
Ծանոթանալ հիմնական աշխատանքի համար նախանկարի կատարման

առանձնահատկություններին, թեմատիկ նկարում ամենահարմար և հետաքրքիր հատվածի ընտրությանը:
Վերջնարդյունքներ
Կկարողանան ստեղծել ծավալային կոմպոզիցիա:
Բովանդակություն
1.Գույն և երանգ 4 ժամ • Պատկերի ստեղծումը գույների միջոցով 2 ժ • Մի գույնից անցում մյուսին 2 ժ 2. Գիծ, ուրվագիծ 4ժամ • Գծերի բնույթը (սահուն,հստակ) 2 ժ • Թեմատիկ գծանկար 2 ժ 3. Կոմպոզիցիա 5 ժամ • Գծային կոմպոզիցիա 1 ժ • Թեմատիկ կոմպոզիցիա աստվածաշնչյան թեմայով 2 ժ • Հեքիաթի ձևավորում 2 ժ 4. Ապլիկացիա 5 ժամ • Առարկայական ապլիկացիա 2 ժ • Զարդաեղանակային ապլիկացիա 2 ժ • Պատումային ապլիկացիա 1 ժ 5. Հեռանկար 4 ժամ • Հիմնական հասկացողություն հեռանկարի մասին 1 ժ • Գծային հեռանկար 1 ժ • Գունային հեռանկար 1 ժ • Տոնային հեռանկար 1 ժ

Դեկորատիվ նկարչություն(16 ժամ)
Նպատակը
Զարգացնել զարդանկարում հայրենի բնության միջնորդային արտացոլումը, նյութի գեղարվեստական իրի և նրա ձևի կապը զարդանկարային մոտիվի կատարման հետ:
Խնդիրներ
Ծանոթանալ դեկորատիվ զարդանախշերի արտացոլմանը՝ պատկերների կրկնությամբ :
Վերջնարդյունքներ
Կկարողանան ստեղծել զարդանախշի պատկերում՝ առարկաների դեկորատիվ ուրվագծային պատկերմամբ:
Բովանդակություն
1.Զարդանկար 6 ժամ • Ծանոթացում, վերլուծություն 1 ժ • Նախշային զարդանկարի սխեմատիկ պատկերում 2 ժ • Խեցեղեն անոթների նկարազարդման զարդանախշի սխեմատիկ պատկերում 1 ժ • Ծեփամածիկով զարդանախշի պատրաստում 2 ժ 2.Զարդաքանդակ 6 ժամ • Զրույց զարդաքանդակի մասին 1 ժ

- Տեղեկություն, վիրտուալ ցուցադրություն հայկական զարդաքանդակների դիտում, քննարկում 2 ժ
- Եկեղեցու պատկերում 3 ժ

3. Կոմպոզիցիա երկրաչափական պատկերներով 4 ժամ
- Ստեղծել կոլաժ 2 ժ
- Ստեղծել վիտրաժ (ապակենկար) 2 ժ

Զրույց կերպարվեստի մասին (10 ժամ)
Նպատակը
Զրույցի միջոցով զարգացնել բարոյական արժեքային համակարգի ձևավորումը:
Խնդիրներ
Թեմային համապատասխան առաջադրված հարցը ընկալել և քննարկել:
Վերջնարդյունքներ
Նկարիչների նկարների վերլուծություն, ինտերիերի և էքստերիերի պատկերման առանձնահատկությունների ըմբռնում:
Բովանդակություն
1. Կերպարվեստի ժանրերը 5 ժամ • Դիմանկարի ժանր 1 ժ • Անիմալիստական ժանր 1 ժ • Նատյուրմորտի ժանր 1 ժ • Դիցաբանական ժանր 1 ժ • Բնանկարի ժանր 1 ժ 2.Կերպարվեստի տեսակները 5ժամ • Գեղանկարչություն 1 ժ • Գրաֆիկա 1 ժ • Քանդակագործություն 1 ժ • Դեկորատիվ կիրառական արվեստ 1 ժ • Դիզայն 1 ժ